Արձանագրություն N 4
ՀՀ-ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-(19/9-Լ) ծածկագրով գնանշման հարցման
գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

21 մայիսի 2019 թ.
ժամը 11:00

Մասնակցում էին հանձնաժողովի՝
Նախագահ՝ Ա. Ղարիբջանյանը
անդամներ՝ Մ. Դուրգարյանը, Լ. Դեմիրչյանը, Մ. Կարապետյանը
քարտուղար՝ Լ. Հարությունյանը
Բացակայում էր հանձնաժողովի անդամ Տ. Պետրոսյանը

I. Ընթացակարգի հայտերի գնահատման արդյունքների մասին

(Ա. Ղարիբջանյան)

1. Հրավերով սահմանված ժամկետում ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ ՍՊԸ, ՕՊՏՇԻՆ ՍՊԸ, ՏրանզիտՊրո ՍՊԸ, Սմարթլայն ՍՊԸ, Ինֆինիտի Գրուպ ՍՊԸ, ՄԷՄԱ ՍՊԸ, Էմ Սի Էս Կովկաս ՍՊԸ-երը ներկայացրել են հրավերով պահանջվող փաստաթղթերը:
2. Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրեց ներկայացված փաստաթղթերը՝ առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը հավելված 6 և 6.1-ը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված դրական եզրակացությունը և գնահատման արդյունքում՝ հանձնաժողովը արձանագրեց, որ մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա են անճշտություններ, մասնավորապես, առաջին տեղը զբաղեցրած մասնակիցներից երկուսի՝ ՏրանզիտՊրո ՍՊԸ-ի և ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթերը վավերացված չեն էլ. թվային ստորագրությամբ, ՏրանզիտՊրո ՍՊԸ-ի և ՕՊՏՇԻՆ ՍՊԸ-ի կողմից ներկայացված Հավելված 6.1-ում՝ առաջարկվող ապրանքի տեխնիկական բնութագրերը հստակ չեն ներկայացնում կոնկրետ ապրանքը, այլ պարունակում են հրավերով սահմանված նվազագույն չափորոշիչներով միջակայքեր, ներկայացված չեն արտադրողի անվանման և ապրանքային նշանի վերաբերյալ տեղեկություններ /նշված են համարժեք բառը, միջակայքեր/:
3. Հիմք ընդունելով հանձնաժողովը անդամների կողմից իրականացրած գնահատումը հանձանաժողովը որոշեց.

   ա/ Մեկ աշխատանքային օրով կասեցնել հանձնաժողովի նիստը և առաջարկել ՏրանզիտՊրո ՍՊԸ, ԱՌԷԱ ՊԱՊԻՐՈՒՍ, ՕՊՏՇԻՆ ՍՊԸ-ներին՝ մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

   Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Ղարիբջանյան

անդամներ՝ _____ Մ. Դուրգարյան

_____ Լ. Դեմիրչյան

_____ Մ. Կարապետյան

քարտուղար՝ _____ Լ. Հարությունյան

II. Բանակցությունների ընթացքի մասին

(Ա. Ղարիբջանյան)

Բանակցությունների նպատակով հրավիրված նիստին մասնակից Սմարթլայն ՍՊԸ-ն չի ներկայացել:
Հանձնաժողովը որոշեց՝
ա/ Չկայացած հայտարարել ընթացակարգի 15-րդ չափաբաժինը՝ Գնումների մասին" ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի հիմքով:
Ընդունվել է որոշում՝ կողմ 4, դեմ 0:

Հանձնաժողովի

նախագահ՝ _____ Ա. Ղարիբջանյան

անդամներ՝ _____ Մ. Դուրգարյան

_____ Լ. Դեմիրչյան

_____ Մ. Կարապետյան

քարտուղար՝ _____ Լ. Հարությունյան